## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

**1. Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝**

1) Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 10-ի N 24-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.1038 հա գյուղատնտեսական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին:

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՏԱՃՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 27-Ն

### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 28-ի N 01/15.1/3815-17 գրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 10-ի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 24-Ն որոշումից հանել «2) լոտ 2 կոդ 07-054-0315-0164; 0.1038 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 7007 ՀՀ դրամ:» նախադասությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՏԱՃՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ <u>ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 28

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.1038 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով կից հողամասի սեփականատերերի համաձայնագիրը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.1038 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ ***ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.1038 հա (սեփականության վկայական N 12072017-07-0080, ծածկագիր 07-054-0315-0164) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ուղղակի վաճառքով օտարել կից հողամասի սեփականատեր Մելինե Ավետիսի Դավթյանին ամբողջ կադաստրային արժեքով (7010 ՀՀ դրամ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ